

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՕԳՈՍՏՈՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	3
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	5
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	7
4. ՓՈԽԱՐԺԵՔ	8
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի եկամուտները	10
5.2. Բյուջեի ծախսերը	11
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	12
5.4. Պետական պարտք	12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	14
6.1. Գնաճ	14
6.2. Ավանդներ	14
6.3. Վարկեր	15
6.4. Դրամական փոխանցումներ	18
7. ԱՄՓՈՓՈՒՄ	18

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ


2022թ. տարեսկզբից սրված ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով դեպի ՀՀ կապիտալի և աշխատուժի ներհոսքը շարունակում է էական դրական ազդեցություն ունենալ ՀՀ տնտեսական ակտիվության վրա: Օգոստոսին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) կազմել է 18.5%, որը թեև փոքր-ինչ դանդաղել է նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատ, սակայն մնացել է բավական բարձր մակարդակում: Հունվար-օգոստոս ամիսների ՏԱՑ-ը կազմել է 13.9%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.8 տոկոսային կետով: Հարկ է նշել, սակայն, որ նախորդ տարվա օգոստոսին արձանագրվել էր ՏԱՑ-ի կտրուկ դանդաղում՝ պայմանավորված մետաղական հանքանյութերի արտահանման տուրքի ներդրմամբ: Հետևաբար, այս տարվա օգոստոսին ՏԱՑ-ը, այլ հավասար պայմաններում, պետք է արագանար հուլիսի ՏԱՑ-ի համեմատ, այլ ոչ թե դանդաղեր:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %




2022թ. հունվար-օգոստոս ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել ծառայությունների և առևտրի աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր ՏԱՑ-ին կազմել են համապատասխանաբար 5.6 և 5.1 տոկոսային կետ: Էական է եղել նաև արդյունաբերության նպաստումը՝ կազմելով 2.4 տոկոսային կետ:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2022թ. հունվար-օգոստոսին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտի աճի տեմպը կտրուկ արագացել է: Արդյունաբերության ոլորտի իրական թողարկման աճը 2022թ. օգոստոսին կազմել է 23.3%՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատ արագանալով շուրջ 9.6 տոկոսային կետով: Սակայն, ինչպես նշվել է վերևում, այս ոլորտում առկա է էական բազայի էֆեկտ: Մասնավորապես, 2021թ. օգոստոսին արդյունաբերության ոլորտում գրանցվել էր շուրջ 5.2% անկում՝ հիմնականում պայմանավորված հանքարդյունաբերության ոլորտում մետաղական հանքանյութերի արտահանման տուրքի ներդրմամբ, որին անպատրաստ լինելով՝ հանքարդյունաբերության ոլորտի կազմակերպությունները կրճատել էին իրական


թողարկման ծավալները: Այնուամենայնիվ, օգոստոսին արդյունաբերության ոլորտի աճի արագացումը հանգեցրել է նաև հունվար-օգոստոս ամիսներին աճի արագացմանը, որը կազմել է 9.2%՝ արագանալով շուրջ 2.2 տոկոսային կետով:

2022թ. հունվար-հուլիս ամիսների տվյալներով¹ արդյունաբերության աճը պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության շուրջ 16.4% աճով, որի նպաստումն ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է 9.4 տոկոսային կետ: Հանքարդյունաբերության ոլորտում անկման տեմպը մեղմվել է՝ հունվար-հունիսին արձանագրված 10.3%-ից դառնալով 9.1%, ինչն ընդհանուր արդյունաբերության աճին հակազդել է 2.6 տոկոսային կետով:

Արդյունաբերության աճին նպաստել է նաև «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» և «էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ենթաճյուղերի աճերը՝ շուրջ 0.1-ական տոկոսային կետով:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %




Շինարարության ծավալների աճի տեմպը մնացել է գրեթե նույն մակարդակում: Շինարարության աճն ընթացիկ տարվա օգոստոսին կազմել է 16.3%՝ հուլիսի համեմատ դանդաղելով 0.6 տոկոսային կետով: Սակայն, կուտակային՝ հունվար-օգոստոս ամիսների աճի տեմպը շարունակել է արագանալ՝ կազմելով 14.2%:

¹ 2022թ. հունվար-օգոստոս ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների աճի տեմպը սկսել է դանդաղել: 2022թ. օգոստոսին ծառայությունների աճը կազմել է 25.1%: Վերջինս բավական բարձր ցուցանիշ է, սակայն նախորդ ամսվա համեմատ ցածր է շուրջ 5.5 տոկոսային կետով: Հունվար-օգոստոս ամիսների աճը հունվար-հուլիսի համեմատ նույնպես դանդաղել է՝ կազմելով 27.1% (դանդաղումը նախորդ ամսվա համեմատ՝ շուրջ 0.4 տոկոսային կետ):

2022թ. հունվար-հուլիս ամիսների տվյալներով² ծառայությունների աճն առավելապես պայմանավորված է «ֆինանսական և ապահովագրական գործունեություն», «տեղեկատվություն և կապ» և «տրանսպորտ» ենթաճյուղերի աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 11.6, 5.1 և 4.3 տոկոսային կետ:

² 2022թ. հունվար-օգոստոս ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ոլորտի աճի տեմպը նույնպես որոշակի դանդաղել է։ 2022թ. օգոստոսին առևտրի աճի տեմպը կազմել է 20%՝ հուլիսի 21.3%-ի համեմատ դանդաղելով 1.3 տոկոսային կետով։ Հունվար-օգոստոս ամիսների առևտրի աճի տեմպը, սակայն, արագացել է 1.1 տոկոսային կետով՝ կազմելով 13.6%։

2. ԱՐՏԱԲԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ³, %




³ ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է արտահանման նախորդ ամիսների ցուցանիշները, ինչի արդյունքում 2022թ. հունվար-փետրվար ամիսների արտահանման աճի ցուցանիշը նվազել է 0.6 տոկոսային կետով, հունվար-մարտ ամիսների ցուցանիշը՝ 0.3 տոկոսային կետով, հունվար-ապրիլ և հունվար-մայիս ամիսների ցուցանիշները՝ 0.3-ական տոկոսային կետով, իսկ հունվար-հունիս և հունվար-հուլիս ամիսների ցուցանիշները բարելավվել են համապատասխանաբար 0.2 և 0.2 տոկոսային կետով։

Ապրանքների արտահանման աճի տեմպն էլ ավելի է արագացել: 2022թ. օգոստոսին արտահանման ծավալն աճել է շուրջ 2.1 անգամ՝ 106%-ով: Ընդ որում, ներքին տնտեսությունը բնութագրող ցուցանիշները նման աճ չեն գրանցել, ընդհակառակը՝ որոշ ոլորտներում գրանցվել է աճի տեմպի դանդաղում: Հետևաբար, հաշվի առնելով նաև ներմուծման կրկնակի աճը, կարելի է եզրակացնել, որ տեղի է ունենում ապրանքների վերարտահանում: Հունվար-օգոստոս ամիսների արտահանման ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 52.9%-ով՝ հունվար-հուլիսի համեմատ արագանալով շուրջ 8.8 տոկոսային կետով:

2022թ. հունվար-հուլիս ամիսների տվյալներով⁴ արտահանման աճը հիմնականում պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման շուրջ 143.1% աճով, որի նպաստումն ընդհանուր արտահանման աճին կազմել է 14.5 տոկոսային կետ: Արտահանման աճին էական նպաստում են ունեցել նաև «պատրաստի սննդի արտադրանք», «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», ինչպես նաև «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերի արտահանման աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 7.1, 6.3 և 5.5 տոկոսային կետ:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ⁵, %



⁴ 2022թ. հունվար-օգոստոս ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

⁵ ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները, ինչի արդյունքում 2022թ. հունվար-փետրվար ամիսների ներմուծման աճի ցուցանիշը նվազել է 0.2 տոկոսային կետով, հունվար-մարտ ամիսների ցուցանիշը՝ 0.1 տոկոսային կետով, հունվար-մայիս ամիսների ցուցանիշը՝ 0.2 տոկոսային կետով, հունվար-հունիսը՝ 0.5 տոկոսային կետով, իսկ հունվար-հուլիս ամիսներին աճի ցուցանիշը բարելավվել է 0.5 տոկոսային կետով:

Ներմուծման ծավալների աճի տեմպը նույնպես կտրուկ արագացել է: 2022թ. օգոստոսին ներմուծման ծավալը նախորդ տարվա օգոստոսի համեմատ աճել է ավելի քան 2 անգամ՝ 105.3%-ով: Հունվար-օգոստոս ամիսների աճի ցուցանիշը նույնպես էականորեն արագացել է՝ հասնելով 58.2%-ի նախորդ ամսվա 50.6%-ի դիմաց: Ներմուծման աճի տեմպը գերազանցում է արտահանման աճին, ինչը նշանակում է, որ առևտրային հաշվեկշիռը (արտահանման և ներմուծման տարբերությունը) շարունակում է վատթարանալ:

Ներմուծման աճին նպաստել են գրեթե բոլոր ապրանքախմբերի ներմուծման ծավալների աճերը (հունվար-հուլիս ամիսների տվյալներով⁶), որոնցից առավել նշանակալի է եղել «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «հանքահումքային արտադրանք» և «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի ներմուծումը, որոնք ընդհանուր ներմուծմանն ունեցել են համապատասխանաբար 8.7, 6.5, 6.2 և 5.2 տոկոսային կետ դրական նպաստում:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ


2022թ. հունվար-հուլիսին անվանական աշխատավարձի աճի տեմպը բարձրացել է⁷, սակայն գնաճի պայմաններում իրական աշխատավարձի աճը մնացել է ցածր մակարդակում: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում հունվար-հուլիս ամիսներին նախորդ տարվա համեմատ աճել է 12.0%-ով՝ կազմելով 221,683.0 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է 4.3%-ով և կազմել 179,209.0 դրամ, իսկ մասնավոր հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 14.3%-ով՝ կազմելով 240,489.0 դրամ:

Միևնույն ժամանակ, 2022թ. հունվար-հուլիսին սպառողական գների միջին մակարդակն աճել է 8.3%-ով, ինչի պայմաններում իրական աշխատավարձն աճել է ընդամենը 3.4%-ով, իսկ պետական հատվածում՝ նվազել է շուրջ 3.7%-ով:

⁶ 2022թ. հունվար-օգոստոս ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:


⁷ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, օգոստոսի տվյալները դեռևս չեն հրապարակվել:


**Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը
2021-2022թթ. հունվար-հուլիսին, %**



4. ՓՈԽԱՐԺԵՔ

**Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը
(%, աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական
փոխարժեքը (դրամ)**






ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի արժևորման տեմպը շարունակվում է: ՀՀ դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ 2022թ. հունվար-օգոստոսին արժևորվել է շուրջ 13.5%-ով, իսկ եվրոյի նկատմամբ՝ 26.3%-ով: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի արժևորման տեմպը վերջին ամիսներից դանդաղել է՝ կապված ՌԴ ռուբլու դիրքերի ամրապնդման հետ, և հունվար-օգոստոսին կազմել է 7.1%:

ՀՀ դրամի արժևորման տեմպը որոշակիորեն մեղմվել է՝ օգոստոսին հասնելով շուրջ 406 դրամի: Նման ցածր փոխարժեքն էական խնդիրներ է առաջացնում ինչպես ապրանքներ և ծառայություններ արտահանողների, այնպես էլ տեղական արտադրողների համար, ովքեր խնդիր ունեն մրցակցելու ներմուծվող ապրանքների մասով:

Գծապատկեր 11. ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի ամսական փոխարժեքի օրական միտումները և ՀՀ ԿԲ շուկայական գործառնությունների տոկոսադրույքը 2022թ. ընթացքում



Սեպտեմբերին ԿԲ-ն շարունակել է բարձրացնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով այն 10%, սակայն նույն ժամանակահատվածում ՀՀ սահմանին Ադրբեյջանի կողմից հրահրված ռազմական գործողությունների


արդյունքում դրամը որոշակիորեն արժեզրկվել է, որը կարճ ժամանակահատվածում գրեթե չեզոքացել է:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ⁸

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճի տեմպը մնում է բարձր մակարդակում: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2022թ. հունվար-օգոստոսին աճել են 26.1%-ով՝ նախորդ ամսվա 25.7%-ի փոխարեն: Հարկային եկամուտների աճը կազմել է 25.2%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.6 տոկոսային կետով: Պետական բյուջեի ոչ հարկային եկամուտները 2022թ. հունվար-օգոստոս ամիսներին աճել են շուրջ 31.8%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ շուրջ 2.3 անգամ՝ շուրջ 6.5 մլրդ դրամով:

Գծապատկեր 12. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի (աճը՝ 21.6%), շահութահարկի (աճը՝ 49.0%) և պետական տուրքի (աճը՝ շուրջ 3.3 անգամ) աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր հարկերի աճին կազմել են համապատասխանաբար 7.3 և 5.7-ական տոկոսային կետ:

Հարկ է նշել, որ ԵԱՏՄ մաքսատուրքերի ստացման հետ կապված խնդիրները (տեխնիկական խնդիրների պատճառով ԵԱՏՄ ընդհանուր «կաթսայից»

⁸ Պետական բյուջեի ցուցանիշների աճերի հաշվարկն իրականացվել է դրանց «հազար դրամներով» արտահայտված ցուցանիշների կիրառմամբ: Գծապատկերներում ներկայացված «մլրդ դրամ» արտահայտությամբ ցուցանիշների կիրառման դեպքում աճի ցուցանիշները կարող են փոքր-ինչ տարբեր լինել:


մաքսատուրքերը ՀՀ-ն հունվար-հունիս ամիսներին չէր ստանում) արդեն լուծվել են, և մաքսատուրքերը ներառված են հարկային եկամուտների ցուցանիշներում:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2021թ. հունվար-օգոստոս		2022թ. հունվար-օգոստոս	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	10.9	10.9	25.2	25.2
ԱԱՀ	12.7	4.2	21.6	7.3
Շահութահարկ	11.0	1.3	49.0	5.7
Եկամտային հարկ	2.7	0.8	8.8	2.5
Ակցիզային հարկ	-11.8	-1.0	13.5	0.9
Շրջանառության հարկ	14.1	0.3	28.1	0.6
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	16.4	0.6	60.4	2.2
Մաքսատուրք	36.7	1.7	-34.4	-1.9
Սոցիալական վճար	87.2	1.5	46.1	1.3
Այլ հարկային եկամուտներ	77.2	1.4	18.4	0.5
Պետական տուրք	21.3	0.5	230.7	5.7

5.2. Բյուջեի ծախսերը


Գծապատկեր 13. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ



Պետական բյուջեի ծախսերի աճը շարունակում է էականորեն զիջել եկամուտների աճին: 2022թ. հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ պետական բյուջեի ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են շուրջ 6.3%-ով: Ծախսերի աճը պայմանավորված է ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի աճերով: Ընթացիկ ծախսերի աճի տեմպը բավական ցածր է եղել՝ կազմելով 2.9%, իսկ կապիտալ ծախսերն աճել են 41.5%-ով՝ կազմելով 146.6 մլրդ դրամ: Հարկ է նշել, որ կապիտալ ծախսերի ծավալը օգոստոսի տվյալներով գերազանցել է 2022թ. առաջին կիսամյակի պլանը՝ 139.7 մլրդ դրամը, սակայն բավական հեռու է առաջին ինն ամիսների պլանից՝ 250.4 մլրդ դրամից:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 14. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



Պետական բյուջեն դեռևս հավելուրդային է՝ պլանավորված պակասուրդային փոխարեն: 2022թ. հունվար-օգոստոս ամիսներին կառավարության կողմից հավաքագրված եկամուտներն էականորեն գերազանցել են ծախսերի ծավալը, ինչի արդյունքում ձևավորվել է բյուջեի հավելուրդ շուրջ 53.7 մլրդ դրամի չափով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ձևավորվել էր շուրջ 143.5 մլրդ դրամ պակասուրդ: Նախորդ տարվա համեմատ հավելուրդային բյուջեն էական զսպող ազդեցություն է ունենում տնտեսական ակտիվության վրա: Տնտեսական բարձր աճի տեմպի պայմաններում զսպող հարկաբյուջետային քաղաքականության իրականացումը կարող է արդարացված լինել, սակայն դա չպետք է իրականացվի կապիտալ ծախսերի թերակատարման հաշվին:


5.4. Պետական պարտք

2022թ. օգոստոսի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 9,992.1 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա օգոստոսի նկատմամբ աճելով 11.6%-ով:

Կառավարության պարտքը նույն ժամանակահատվածում նույնպես զգալիորեն աճել է՝ կազմելով 9,451.5 մլն ԱՄՆ դոլար և 2021թ. նույն ամսվա համեմատ ավելանալով 11.4%-ով: Պարտքի աճը հիմնականում պայմանավորված է եղել ներքին պարտքի աճով, իսկ արտաքին պարտքը նվազել է շուրջ 7.1%-ով: Տարեսկզբի համեմատ կառավարության պարտքն աճել է 7.8%-ով կամ 683.6 մլն ԱՄՆ դոլարով՝ պայմանավորված ներքին պարտքի աճով:

Վերջին ամիսներին պետական պարտատոմսերի տոկոսադրույքների աճի միտումը չի շարունակվել, սակայն դրանք մնացել են նախորդ տարվա համեմատ բարձր մակարդակում: Կարճաժամկետ տոկոսադրույքները օգոստոսին կազմել են 10.5%, իսկ միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը՝ 11.3%, որոնք նախորդ տարվա նույն ամսվա համեմատ ավելի են համապատասխանաբար 2.2 և 1.7 տոկոսային կետով:


Գծապատկեր 15. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 16. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպը սկսել է որոշակիորեն դանդաղել: Օգոստոսին գնաճի տեմպը կազմել է 9.1%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.2 տոկոսային կետով: Սա արդեն երկրորդ ամիսն է, որ գնաճը դանդաղում է, սակայն, պետք է նկատել, որ առկա է բազայի էֆեկտ, այսինքն՝ նախորդ տարի նույն ամիսներին գնաճի տեմպի զգալի արագացում է նկատվել: Հետևաբար, գնաճային միտումների արագացման ռիսկերը դեռևս պահպանվում են: Այդ պայմաններում ՀՀ ԿԲ-ն սեպտեմբերին բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով այն 10%:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 17. Ավանդների 12-ամսյա աճը, %



2022թ. օգոստոսին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճի տեմպը արագացել է: 2022թ. օգոստոսի վերջի դրությամբ ավանդների ընդհանուր ծավալները նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել են 10.7%-ով՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 1.0 տոկոսային կետով: Պետք է նկատել սակայն, որ այստեղ ևս առկա է բազայի էֆեկտ (նախորդ տարվա նույն ամսում ավանդների աճի տեմպը կտրուկ նվազել էր): Ավանդների աճն ապահովվել է և՛ ռեզիդենտների, և՛ ոչ ռեզիդենտների ավանդների ծավալների աճով՝ համապատասխանաբար 10.8%-ով և 10.2%-ով:

Գծապատկեր 18. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճին շուրջ 4.6 տոկոսային կետով դրական նպաստում է ունեցել տնային տնտեսությունների ավանդների 10.0% աճը, իսկ ձեռնարկությունների ավանդների աճի տեմպը կազմել է 14.8%՝ ընդհանուր ավանդների աճին նպաստելով 3.0 տոկոսային կետով:

6.3. Վարկեր


2022թ. օգոստոսին վարկերի աճի տեմպը մնացել է գրեթե նույն մակարդակում: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը 2022 թվականի օգոստոսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 3.2%-ով:

Գծապատկեր 19. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները աճել են շուրջ 1.7%-ով և ընդհանուր վարկերի աճին ունեցել են 0.1 տոկոսային կետ նպաստում: Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները աճել են 3.3%-ով և վարկերի ընդհանուր ծավալին ունեցել են՝ 3.1 տոկոսային կետ դրական նպաստում:

Գծապատկեր 20. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը հիմնականում պայմանավորված է տնային տնտեսությունների վարկերի շուրջ 11.7% աճով, մինչդեռ իրավաբանական անձանց վարկերը շարունակում են նվազել:

Գծապատկեր 21. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ




Վարկերի կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի⁹ ուսումնասիրելու պարագայում կարող ենք նկատել, որ վարկերի աճին դրական նպաստում են ունեցել հիմնականում հիպոթեքային վարկերը, որոնց աճը կազմել է 32%, իսկ նպաստման չափը՝ 4.9 տոկոսային կետ: Գյուղատնտեսության ոլորտի վարկերի աճի տեմպի նախորդ ամիսների արագացումը չի շարունակվել, և այդ ոլորտի վարկերի աճը կազմել է 12.4%՝ հուլիսի աճի համեմատ դանդաղելով 5 տոկոսային կետով, իսկ նպաստումն ընդհանուր վարկերի աճին կազմել է 0.7 տոկոսային կետ: Շինարարության ոլորտին տրամադրվող վարկերի աճի տեմպը պահպանվել է՝ կազմելով շուրջ 8.7%, իսկ նպաստման չափը կազմել է 0.1 տոկոսային կետ:

⁹ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 22. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը¹⁰



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքի ծավալների աճը կտրուկ դանդաղել է: Այսպես, 2022թ. հուլիսին բանկային համակարգի միջոցով դեպի Հայաստան փոխանցված գումարների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) կազմել է 135.4 մլն ԱՄՆ դոլար, ինչը ընդամենը 34.4%-ով է գերազանցում նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշը, այն դեպքում, երբ մայիս և հունիս ամիսներին դրամական փոխանցումների ծավալը ավելի քան երեք անգամ էր գերազանցում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշներին: Այս դեպքում ևս նկատվում է բարձր աճերի դանդաղում, ինչը պետք է ազդանշան լինի դրական շուկի ժամանակավոր լինելու մասին:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Ռուս-ուկրաինական հակամարտության պայմաններում Հայաստան ներհոսող կապիտալի և աշխատուժի էական դրական ազդեցությունները չեն արագանում, նկատվում է աճի տեմպի որոշակի նվազում: Տնտեսական ակտիվության ցուցանիշն օգոստոսին որոշակիորեն դանդաղել է հուլիսի համեմատ, այն դեպքում, երբ նախորդ տարվա օգոստոսին գրանցվել էր աճի տեմպի կտրուկ դանդաղում: Աճի տեմպի դանդաղման միտում է նաև նկատվում

¹⁰ Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումների տարբերությունը ԱՄՆ դոլարով:
2022թ. օգոստոսի ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

ծառայությունների և առևտրի ցուցանիշների դինամիկայում, որոնք առավել կտրուկ էին արձագանքել դրական շոկին և հանդիսանում են СУՑ-ին հիմնական նպաստում ունեցող ճյուղերը: Սա խոսում է այն մասին, որ թեև տնտեսական ակտիվության աճը դեռևս բավական բարձր է, առաջիկայում առկա են դրա դանդաղման ռիսկեր:

2. Ներկա բարձր տնտեսական ակտիվության աճ ապահովող գործոնները բավական զգայուն են: Ադրբեջանի կողմից սեպտեմբերին հրահրված ռազմական գործողությունների արդյունքում նկատվեց ՀՀ դրամի կտրուկ արժեզրկում, որը չեզոքացավ իրավիճակի կայունացմանը զուգահեռ: Դա ցույց է տալիս, որ ներկա իրավիճակը և դեպի ՀՀ ներհոսող ֆինանսական ռեսուրսները բավական զգայուն են երկրում տիրող իրավիճակի նկատմամբ և որևէ բացասական իրադարձության դեպքում կարող են կտրուկ չեզոքանալ, կամ կապիտալը կարող է ՀՀ-ից արտահոսել, ինչի արդյունքում ներկա բարձր տնտեսական ակտիվության տեմպը չի պահպանվի՝ իր բոլոր բացասական հետևանքներով:

3. Գնաճի տեմպը որոշակիորեն դանդաղել է, սակայն դա մասամբ պայմանավորված է եղել բազայի էֆեկտով, այսինքն՝ նախորդ տարի նույն ամիսներին գնաճի տեմպի զգալի արագացում էր նկատվել: Հետևաբար, գնաճային միտումների արագացման ռիսկերը դեռևս պահպանվում են: Այդ պայմաններում ՀՀ ԿԲ-ն սեպտեմբերին բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով այն 10%: Սակայն նախորդ ամիսների վիճակագրությունը ցույց է տվել, որ ԿԲ տոկոսադրույքի բարձրացումից հետո գնաճը կարող է շարունակել արագանալ: Եթե արտաքին աշխարհի գնաճային միտումները, ինչպես նաև ՀՀ-ում մեծ պահանջարկը պահպանվեն, ապա գնաճի արագացումը կարող է շարունակվել նաև հետագա ամիսներին՝ ունենալով բացասական սոցիալական և տնտեսական հետևանքներ:

4. Դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների ծավալների բարձր աճերը ևս չեն պահպանվել: Ընթացիկ տարվա հուլիսին բանկային համակարգի միջոցով դեպի Հայաստան փոխանցված գումարների զուտ ներհոսքը գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշն ընդամենը 34.4%-ով, ինչը զգալիորեն ավելի փոքր է, քան նախորդ ամիսների աճերը: Սա ևս արտացոլում է շոկի ժամանակավոր լինելը և այն, որ իրավիճակի փոփոխության դեպքում ՀՀ-ում բարձր աճ ապահովող գործոնները կարող են չեզոքանալ: Հետևաբար, կառավարությունը պետք է ակտիվորեն միջոցներ ձեռնարկի ներհոսող կապիտալը տնտեսության արտադրողականությունը բարձրացնող նախագծերին և միջոցառումներին ուղղելու նպատակով:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: